# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից պարտադիր լիազորությունների իրականացման շարքում տեղ են գրաղեցրել քաղաքացիների կողմից բարձրացրած դիմումների և բողոքների ընթացք տալը, ինչպես նաև համայնքի ղեկավարի մոտ անհատական ընդունելություն կազմակերպելը:
Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ավագանին հաստատել է համայնքի ավագանու նիստերի ժամանակացույցը:
Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ավագանին թույլատրել է համայնքի ղեկավարին 2011 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում «ՏԱԳԳԱՏԷ» ՍՊԸ –ին ինչպես նախորդ տարիների պարտքի մարում ֆոնդային բյուջեից փոխանցել 500.0 հազ. դրամ:
2011 թվականի բյուջեի մեջ ավագանու որոշմամբ կատարվել է փոփոխություն՝
04/3/2 հատվածի 5113 հոդվածի 8655.8 հազ. դրամից 400.0 հազ. դրամը տեղափոխել կառավարման ապարատի 01/1/1 հատվածի տրանսպորտային սարքավորումներ 5121 հոդվածին ծառայողական մեքենայի վերանորոգման համար,457.0 հազ. դրամը տեղափոխել կառավարման ապարատի 01/1/1 հատվածի վարչական սարքավորումներ 5122 հոդվածին կահույք ձեռք բերելու համար:

Համայնքի բյուջեն ունեցել է հետևյալ կառուցվածքը՝

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

| Վարչական բյուջե | (հազ.դրամ) | Ֆոնդային բյուջե (հազ.դրամ) |
|---|---|---|
| Հողի հարկ | 3700.0 | |
| Գույքահարկ | 552.4 | |
| Հողի վարձավճար | 500.0 | |
| Տեղական տուրք | 100.0 | |
| Դոտացիա | 4763.9 | |
| Պատվ. լիազորութ. | 600.0 | |
| Տարես. ազատ միջ. | | 9155.8 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 10268.7 | 9155.8 |

## ԾԱԽՍԵՐ

| Վարչական բյուջե | (հազ.դրամ) | Ֆոնդային բյուջե | (հազ.դրամ) |
|---|---|---|---|
| Աշխատավարձ | 4757.0 | Կապիտալ վերան. ծախս | 8298.8 |
| Սոց վճար | 1050.0 | Վարչական սարքավորումներ | 457.0 |
| էլեկտրոէներգիայի վարձ | 100.0 | Տրանսպորտային սարքավ. | 400.0 |
| Ներքին գործուղումներ | 200.0 | | |
| Մեքեն. ընթացիք նորոգում | 300.0 | | |
| Գրասենյակային նյութեր | 250.0 | | |
| Տրանսպորտային նյութեր | 600.0 | | |
| Աշխատավարձ (ն.տ.պ.մ.) | 566.7 | | |
| Անասնաբուժ. ծառայութ. | 600.0 | | |
| Աղբահանում | 400.0 | | |
| Սոց. հատուկ արտոնություն | 800.0 | | |
| Տեղեկատվական ծառայություն | 60.0 | | |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայ. | 35.0 | | |
| Պահուստային ֆոնդ | 550.0 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 10268.7 | | 9155.8 |

2011թ-ի 1-ին կիսամյակում բյուջեի կատարողականը հետևյալն է՝

# ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Վարչական բյուջե

| | Պլանային (հազ.դրամ) | Փաստացի (հազ.դրամ) | Կատարող (% ) |
|---|---|---|---|
| Հողի հարկ | 1250.0 | 940.3 | 75.2 |
| Գույքահարկ | 321.2 | 243.6 | 75.8 |
| Հողի վարձավճար | 200.0 | 14.6 | 7.3 |
| Տեղական տուրք | 50.0 | 40.9 | 81.8 |
| Դոտացիա | 2382.0 | 2382.0 | 100.0 |
| Պատվ. լիազորություն | 300.0 | 0 | 0 |
| Այլ ոչ հարկային եկամ. | 25.0 | 0 | 0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 4528.2 | 3621.3 | 80.0 |

# ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

## Ֆոնդային բյուջե

| | Պլանային (հազ.դրամ) | Փաստացի (հազ.դրամ) | Կատարող (% ) |
|---|---|---|---|
| Այլ եկամուտներ | | 303.0 | |

Հաշվի առնելով այն հանգամանքը,որ համայնքի ղեկավարը պատասխանատու է բյուջեի կատարման համար,ուստի եռամսյա կտրվածքով հաղորդումներ է ներկայացվել ավագանուն բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ: Աջակցություն է ցուցաբերվել զինծառայողների,պատերազմի վետերանների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծմանը:Այս բնագավառում աջակցություն է ցուցաբերվել զինկոմիսարիատի և մարզային զորակոչային հանձնաժողովին զորակոչի կազմակերպման և անցկացման հարցում:

Հաշվետու ժամանակաշրջանում որոշակի աշխատանքներ են իրականացվել աղբահանության հետ կապված:

Ճանապարհաշինության բնագավառում իրականացվել են համայնքի սեփականություն հանդիսացող ճանապարհների վերանորոգման աշխատանքներ: Արմավիրի մարզպետարանի կողմից որպես օգնություն տրամադրված 250 լիտր դիզ վառելանյութը օգտագործվել է համայնքի ճանապարհների մասնակի ավազապատման համար:

Որպես կանոն համայնքային ենթակայություն ունեցող բուժական ամբուլատորիան իրականացրել է բոլոր նախատեսված պատվաստումները և անհրաժեշտության դեպքում իրականացրել է բոլոր հիվանդների առաջին բուժ օգնությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում սոցիալական նշանակություն ունեցող խնդիրների շարքում կարեվոր նշանակություն է ունեցել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական օգնությոն տրամադրելու հարցը:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ավագանու որոշմամբ համայնքի թվով 10 ընտանիքի հատկացվել է 200.0հազ.դրամ դրամական օգնություն: Արմավիրի մարզպետարանի կողմից որպես օգնություն տրամադրված վարունգի,եգիպտացորենի և ծմերուկի սերմերը բաշխվել են կարկտահարությու-նից տուժած թվով 71 ընտանիքների,ինչպես նաև 10 պարկ ալյուրը բաշխվել է համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին:

Որպես պատվիրակած լիազորություն համայնքի ղեկավարը կազմակերպել է համայնքի տարածքում գտնվող անասնաբուժական ծառայության գործունեությունը

կենդանիների հիվանդությունների կանխարգելման և ագրարային կանոնների պահպանման հետ կապված:

Բագարան համայնք…

Գ. Մարգարյան

1. Խմելաջրի համակարգի վերանորոգում
2. [illegible] ներքին ճանապարհների վերանորոգում
3. Մշակույթի տան վերանորոգում